

գիւ երբեք գործածուած է մեր մատենա-
 գրերէն. զոր օրինակ Աղեքսանդրի Պատ-
 մութեան մէջ (27): Անոր սովորական կո-
 չումն էր տաճար. բառ մը՝ որ դասական
 լեզուին մէջ սեպհական էր որ եւ իցէ ըն-
 դարձակ տեղոյ եւս՝ ուր բնակութիւն կամ
 հաւաքմունք կը լինէին: Ուստի այսպէս
 կոչուեր են՝ ապարանք կամ մեծամեծ
 տներ (Սղմ. ԽԳ, 9. Դան. Ա, 4. Պտմ.
 Աղ. 99. Արծ. 300), համաձայն եւ հո-
 մանիշ պրս. տաճար բառին (Հիւբշ. 251).
 եւ անոնց մէջ ընդարձակ սենեակներ (Պտմ.
 Աղ. 155. Արծ. 328), կամ ժողովոյ սը-
 րահներ (Ա Մակ. ԺԲ, 3). եկեղեցւոյ ներ-
 քինը բեմէն դուրս՝ ուր ժողովուրդը կը խըմ-
 բուէր (Օձն. 134, '40. Լմբբ. Պտր. 146),
 եւ փոխաբերաբար ամբողջ սրբավայրը
 (Փաւս. 48. Ազթ. 577). նմանապէս հրէա-
 կան աղօթատեղին (Գ Թագ. 2, 15, 17),
 եւ երբեմն հեթանոսաց մեհեանն ալ (Վկայ.
 Ա, 1, 26, 27, 546): Արդ՝ ճաշի տաճարն
 եւս՝ աւելի հայեցի առմամբ՝ ցոյց կու
 տայ մեզ տան մէջ ընդարձակ սրահ մը,
 որ յատկացուած էր ընտանեօք ու բարե-
 կամօք ի միասին կերակրուելու. եւ որ
 կոչուած է նաեւ տեղի քաղմակաւաց (Փաւս.
 48), դահլիճ (Խոր. 250), խրախմանարան
 (Նար. 202) կամ խրախարան (Որբ. ի